

ЭММА АТАЯН ПРОБЛЕМЫ ФИНАНСОВОЙ УСТОЙЧИВОСТИ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ АРМЕНИИ

Ключевые слова: банковская система, финансовая устойчивость, внутренние и внешние факторы, риски, денежно кредитная политика.

Банковская система Армении является самым большим участником финансового сектора, которому принадлежит доминирующая часть финансовых активов. В этом случае с точки зрения оценки устойчивости финансовых учреждений особенно важна определение и оценка рисков влияющих на деятельность банковской системы. В статье представлены основные факторы, влияющие на финансовую стабильность банковской системы Армении.

EMMA ATAYAN THE PROBLEMS OF FINANCIAL STABILITY OF BANKING SYSTEM IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words: banking system, financial stability, internal and external factors, risks, monetary policy.

Banking system of the Republic of Armenia is the largest participant of financial sector, which owns the dominant part of financial assets. In this case, from the point of view of assessing the stability of financial institutions, it is especially important to determine and assess the risks affecting the activity of the banking system. The main factors affecting the financial stability of the Armenian Banking system are presented in the article.

ՀՈՒՓՍԻՄԵ ԱԼԲԵՐՏՅԱՆ

Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի), մագիստրատուրա, 1-ին կուրս

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ

Հիմնաբառեր. առևտրային բանկ, ֆինանսական ակտիվ, տեղաբաշխված միջոց, աշխատող վարկ, խնդրահարույց վարկ, երաշխիքային ֆոնդ

Սույն հոդվածի նպատակն է բացահայտել ՀՀ առևտրային բանկերում կիրառվող ֆինանսական ակտիվների հիմնական տեսակները, դրանց տնտեսական բովանդակությունը, հաշվապահական հաշվառման մոտեցումները, տեսական դրույթների հիման վրա ուսումնասիրվող առևտրային բանկում իրականացնել այդ ակտիվների վերլուծությունը: Գոյություն ունեցող ֆինանսական ակտիվները տարատեսակ են և բազմաբնույթ: Սակայն կարարված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ բանկային համակարգում առավել կիրառական գործիքներ են վարկերը: Վարկերն ապահովում են բանկերի եկամտի մեծ մասը, սակայն առաջ են բերում նաև կորուստների մեծ ռիսկ: Այդ իսկ պատճառով չափազանց կարևորվում է դրանց արդյունավետ կառավարմանն ուղղված միջոցների բացահայտումը և կիրառումը: Մասնավորապես առաջարկվում է երաշխիքային ֆոնդերի ներդրումը, որոնք էականորեն կնվազեցնեն վարկային ռիսկի մակարդակը ՀՀ-ում:

Երկրի ֆինանսական համակարգի կայուն և հուսալի վիճակը տնտեսության զարգացման կարևոր նախադրյալներից է: Վերջինս էապես պայմանավորված է երկրորդային օղակ հանդիսացող առևտրային բանկերի և այլ ֆինանսավարկային կազմակերպությունների ֆինանսական կայուն վիճակով:

Ակտիվային գործառնությունների իրականացման համար առևտրային բանկերը ձևավորում են ֆինանսական ռեսուրսներ, որոնց կազմում գերակշռող են բանկի ֆինանսական ակտիվները: Բանկային համակարգում ֆինանսական ակտիվների հաշվապահական հաշվառումը կատարվում է բանկում գործող հաշվապահական հաշվառման քաղաքականության հիման վրա: Այդ քաղաքականությունը մշակվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (մասնավորապես՝ ՀՀՄՍ32, ՀՀՄՍ39, ՖՀՄՍ7, ՖՀՄՍ9) և այլ իրավական ակտերի պահանջների հիման վրա: Համաձայն ՀՀՄՍ 32 «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը» ստանդարտի՝ ֆինանսական ակտիվն առաջին հերթին ֆինանսական գործիք է: Վերջինս պայմանագիր է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք¹:

Ֆինանսական ակտիվը՝

1) դրամական միջոց է,

2) այլ կազմակերպության բաժնային գործիք է,

3) պայմանագրային իրավունք է՝

- այլ կազմակերպությունից դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ ստանալու կամ
- այլ կազմակերպության հետ, իր համար հնարավոր նպաստավոր պայմաններով, ֆինանսական ակտիվներ կամ ֆինանսական պարտավորություններ փոխանակելու,

4) պայմանագիր է, որը մարվելու է կամ կարող է մարվել կազմակերպության սեփական բաժնային գործիքներով²:

Ֆինանսական ակտիվների դասակարգումն իրականացվում է ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտի պահանջներին համապատասխան: Որպես կանոն, առանձնացվում են ֆինանսական ակտիվների հետևյալ չորս տեսակները.

- ֆինանսական ակտիվ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ³:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը կարևոր է՝ դրանց սկզբնական ճանաչումից հետո հետագա չափման համար: Սակայն Ֆինանսական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը 2014 թ. հուլիսին հրապարակեց IFRS 9 Financial instruments (replacement of IAS 39)-ի չորրորդ փոփոխված փաթեթը⁴, որը պատասխան էր դեռևս 2008 թ. սկսված ֆինան-

¹ Տե՛ս ՀՀՄՍ 32, հոդված 11:

² Տե՛ս ՀՀՄՍ 32, հոդված 11:

³ Տե՛ս ՀՀՄՍ 39, հոդված 9:

⁴ <http://www.ifrs.org>

սական ճգնաժամին: Փաթեթը ուժի մեջ է մտել 2018 թ. հունվարի 1-ին: Համաձայն ստանդարտի՝ այսուհետ պետք է տարբերել ֆինանսական ակտիվների 3 հիմնական տեսակներ՝ ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ (FVTPL – fair value through profit or loss) և իրական արժեքով այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ (FVOCI – fair value through other comprehensive income):

Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվը դասակարգված է որպես առևտրային նպատակներով պահվող, կամ սկզբնական ճանաչման ժամանակ կազմակերպության կողմից այն նախատեսվել է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Այս հոդվածի ակտիվները ձեռք են բերվել կամ առաջացել են հիմնականում գների կամ դիվերային հավելագների (մարժայի) կարճաժամկետ տատանումներից շահույթ ստանալու նպատակով: Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ հաշվառվում են սկզբնական արժեքով և հետագայում վերաչափվում են իրական արժեքով՝ ելնելով գործող շուկայական գներից: Համապատասխան իրացված և չիրացված բոլոր օգուտները և վնասները գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող արժեթղթերից ստացված եկամուտների հոդվածում:


Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ներառում են ամրագրված կամ այլ կերպ որոշելի վճարումներով և ամրագրված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվները, որոնք կազմակերպությունը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետը լրանալը: Կազմակերպության կողմից տրամադրված փոխառությունները և դեբիտորական պարտքերը չեն դասվում մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների շարքը, դրանք առանձնացված են որպես ինքնուրույն դասակարգային տեսակ:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը ամրագրված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներ են, որոնք ստեղծվում են բանկի կողմից՝ ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները այն ներդրումներն են, որոնք բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել՝ ելնելով իրացվելիության պահանջներից կամ տոկոսադրույքի, փոխարժեքների և կապիտալ գործիքների արժեքների փոփոխությունից: Վաճառքի համար մատչելի արժեթղթերի իրական արժեքի փոփոխություններից առաջացած չիրացված շահույթն ու վնասը ուղղակիորեն ճանաչվում են սեփական կապիտալում մինչև այն պահը, երբ նշված ֆինանսական ակտիվը օտարվում է կամ համարվում է արժեզրկված: Այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, պետք է ճանաչվի հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով՝ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում: Երբ վաճառքի համար մատչելի դասա-


կարգված ֆինանսական ակտիվների գծով առկա է կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ վկայություն, այդ ակտիվները վերադասակարգվում են որպես շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող: Ակտիվի իրական արժեքը հիմնված է դրա գնանշված շուկայական գնի վրա: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա ակտիվի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ գեղջված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի օրինակով վերլուծությունն իրականացնենք 2013–2016 թթ. համար: Վերլուծության տեղեկատվական հիմք են հանդիսացել բանկի հրապարակած ֆինանսական հաշվետվությունները: Բանկի ակտիվների կառուցվածքը դիտարկենք հետևյալ գծապատկերի տեսքով, 2016 թ. վերջի դրությամբ (տե՛ս գծապատկեր 1):




Գծապատկեր 1. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի ակտիվների կառուցվածքը առ 31.12.2016 թ.

Նկատում ենք, որ ընդհանուր ակտիվներում գերակշռող մասը կազմում են բանկերին, այլ ֆինանսական կազմակերպություններին, հաճախորդներին տեղաբաշխված միջոցները: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի ռազմավարական առաջնային պրոդուկտ է վարկավորումը: Բանկի վարկային պորտֆելի շարժընթացը 2013–2016 թթ. հետևյալն է (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի վարկային պորտֆելի շարժընթացը (հազ. դրամ)

Գծապատկերից երևում է, որ բանկը տարեցտարի ապահովել է տրամադրված վարկերի կայուն աճ: Հասկանալու համար, թե այդ աճն ինչքանով է դրական ազդեցություն ունեցել բանկի վրա, դիտարկենք նաև բանկի տարվա շահույթի շարժը (տե՛ս գծապատկեր 3): 2014 թ., նախորդ տարվա համեմատ, տեղաբաշխված միջոցներն աճել են 32%-ով, միևնույն ժամանակ, տարվա շահույթն էլ ավելացել է 14%-ով: Դա պայմանավորված է նրանով, որ վարկերի գծով հաշվեգրվում են տոկոսներ, և տրամաբանորեն՝ որքան վարկերը շատ լինեն, այդքան հաշվեգրված տոկոսները մեծ կլինեն: Իր հերթին, նմանատիպ տոկոսային եկամուտները բանկի եկամուտների կազմում բավականին մեծ տեղ են զբաղեցնում և ծանրակշիռ ազդեցություն ունեն տարվա շահույթի վրա: 2015 թ., 2014-ի համեմատ, թեև վարկային միջոցներն աճել են 16%-ով (ավելի փոքր աճի տեմպով), այնուհանդերձ, տարվա շահույթը կրճատվել է 45%-ով: Ուսումնասիրելով 2015 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը՝ նկատում ենք, որ շահույթի ցածր մակարդակը պայմանավորված է եղել տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստների գծով, մինչդեռ, նախորդ տարի առկա է եղել կորուստների հակադարձում: 2016 թ., 2015-ի համեմատ, տեղաբաշխված միջոցներն ապահովել են 47% աճ, իսկ տարվա շահույթն իր հերթին գրանցել է էական աճ՝ շուրջ 102%: Այդ աճը, 2016 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվության տվյալների համաձայն, ապահովվել է շնորհիվ նախորդ տարվա համեմատ ավելի մեծ ծավալի տոկոսային եկամուտների, ինչպես նաև առևտրային գործառնություններից եկամուտների հաշվին:



Գծապատկեր 3. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի տարվա շահույթի շարժը ըստ տարիների (հազ. դրամ)

Հայաստանի մակրոտնտեսական վիճակը 2014–2015 թթ. բնութագրվում էր դեռևս 2009 թ. համաշխարհային ճգնաժամի շարունակական վերականգնմամբ, որին հաջորդեցին Ռուսաստանի տնտեսական վիճակի վատթարացմամբ պայմանավորված նոր ճգնաժամի առաջին նախանշանները: ՀՀ տնտեսության վրա առավել մեծ ազդեցություն ունեցած արտաքին գործոններն են եղել համաշխարհային տնտեսության դանդաղ աճը, նավթի և մետաղների գների անկումը, աշխարհաքաղաքական զարգացումները և


դրանց հետևանքով Ռուսաստանի տնտեսական անկումը, որն անդրադարձավ նաև ՀՀ տնտեսության վրա: Ռուսաստանից կախվածությունն ավելի խորացավ Հայաստանի՝ ԵԱՏՄ-ին անդամակցելուց հետո (2015 թ. հունվարին): Այդ տարիներին բանկային համակարգը նույնպես փորձում էր աջակցել տեղի տնտեսավարող սուբյեկտներին՝ տրամադրելով առավել նպաստավոր պայմաններով միջոցներ:

Այսօր, ինչպես ՀՀ բանկային ողջ համակարգում, այնպես էլ «ՀԱՅ-ԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում, առաջնային խնդիրներից մեկը վարկային պորտֆելի որակն է, դրա կառավարումը: Ըստ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված կարգի¹ բանկերն առնվազն ամիսը մեկ անգամ պետք է վարկերն ու դեբիտորական պարտքերը միաժամանակ դասակարգեն որպես ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի: Ստանդարտ վարկերն աշխատող են, և դրանց գծով մարումները կատարվում են ճիշտ ժամանակին, իսկ մյուս չորսը չաշխատող են, քանզի վերջիններիս գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում: Յուրաքանչյուր բանկ ակտիվների հնարավոր կորուստները ծածկելու նպատակով վարում է առանձին հաշիվներ՝ ընդհանուր (աշխատող) և հատուկ (չաշխատող) պահուստների համար: Պահուստին կատարված հատկացումները որպես ծախս են ճանաչվում (գրանցվում) բանկի Եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունում՝ ելնելով ակտիվների գծով ապագա, բայց դեռևս չպարզաբանված (չբացահայտված) կորուստների առաջացման հավանականությունից: 2013 թ. աշխատող (ոչ ժամկետանց) վարկերը կազմել են վարկային պորտֆելի 98,7%-ը, 2014 թ.՝ 98,5%-ը, 2015 թ.՝ 97,68%-ը, իսկ 2016 թ.՝ 96,47%-ը: Չնայած վերջիններիս բարձր մակարդակին՝ ստանդարտ վարկերի տեսակարար կշիռը տարեցտարի կրճատվել է: Դա պայմանավորված է նրանով, որ այս վարկերի գծով ոչ ժամանակին կատարված մարումները հանգեցրել են կառուցվածքային տեղաշարժերի՝ այս տեսակից դեպի հսկվող վարկերի տեսակ: Չպետք է մոռանալ նաև չաշխատող վարկերի մասին: 2013 թ. խնդրահարույց (չաշխատող) վարկերը կազմել են վարկային պորտֆելի 1,3%-ը, 2014 թ.՝ 1,5%-ը, 2015 թ.՝ 2,32%-ը, իսկ 2016 թ.՝ 3,53%-ը: Ճիշտ է, այս տարիների ընթացքում առկա է եղել չաշխատող վարկերի աճ, սակայն այն չնչին է և վարկային պորտֆելում փոքր ծավալ է զբաղեցնում:

Գծապատկերից ակնառու է, որ մյուս չաշխատող վարկերի համեմատ անհուսալի վարկերը ծավալային առումով բավականին բարձր մակարդակի վրա են: Դրանք այն վարկերն են, որոնց նկատմամբ բոլոր հնարավոր միջոցառումները կիրառելուց հետո այլևս չի սպասվում դրանց գծով մարումների կատարում: 2013–2014 թթ. ընթացքում թեև անհուսալի վարկերը նվազել են, սակայն 2016 թ. ավելի մեծ աճ է նկատվել: Դա արդեն իսկ ահազանգ է բանկի համար, որը խոսում է վարկային պորտֆելի անառողջ վիճակի մասին, պահանջում համակարգված գործողություններ: Առավել հաճախ կառուցվածքային տեղաշարժերը նկատվում են ստանդարտ վարկերից դեպի հսկվող վարկեր և այս տեսակի դեպքում է, որ ավելի մեծ է վարկերի գծով մարումները:

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգ» (ընդունված ՀՀ ԿԲ խորհրդի կողմից, 23-ը ապրիլի 1999 թ.), թիվ 63 որոշում, Հոդված 3.1 – 3.2:

րի կատարման հավանականությունը: Իսկ ահա կասկածելի և անհուսալի վարկերը ավելի մեծ ռիսկային խմբում են, և, որպես կանոն, նմանատիպ վարկերի գծով հետագայում մարումներ չեն կատարվում:



Գծապատկեր 4. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ում հսկվող, սպանդարտ, կասկածելի և անհուսալի վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկային պորտֆելին (%)

Ըստ էության, համանման իրավիճակը թրենդային է ՀՀ գրեթե բոլոր բանկերի համար: Այսօր ՀՀ բանկային համակարգում առավել սուր է դրված վարկային պորտֆելում չաշխատող վարկերի առկայության հիմնախնդիրը: Դա էականորեն ազդում է բանկի շահութաբերության վրա: ՀՀ բանկային համակարգերում ֆինանսական ակտիվների, վերջիններիս գծով ռիսկերի կառավարման միասնական մոդելներ չկան: Յուրաքանչյուր բանկ ներքին կանոնակարգերով ինքն է մշակում ռիսկերի կառավարման ուրույն կառուցակարգ: Բացի դրանից, ՀՀ ԿԲ-ն ևս իր դերակատարումն ունի ռիսկերի զսպման գործում՝ սահմանելով տնտեսական նորմատիվներ: Սակայն, այդքանով հանդերձ, վարկային ռիսկը շարունակում է մնալ օրակարգային հարցերի շարքում: Այս առումով առավել հետաքրքրական են միջազգային փորձում կիրառվող մոտեցումները, որոնք հստակորեն հավաստում են առևտրային բանկերում իրենց կիրառման արդյունավետությունը: Ըստ այդմ, առաջարկում ենք ՀՀ-ում հիմնադրել երաշխիքային ֆոնդեր, որոնց դերը աննկարագրելիորեն մեծ է թե՛ բանկերի, թե՛ հաճախորդների, և թե՛ երկրի տնտեսության համար: Ֆոնդերը գործարար փոքր ու միջին բիզնեսի համար հանդես են գալիս որպես փրկարար օղակներ՝ աջակցելով վերջիններիս վարկավորմանը և հնարավորություն տալով իրականացնելու տնտեսական գործունեություն: Դա էլ իր հերթին նպաստում է երկրի տնտեսական վիճակի բարելավմանը, ՀՆԱ ավելացմանը, լավագույն դեպքում նաև՝ վճարային հաշվեկշռի դրական արդյունքին: Երաշխիքային ֆոնդերի էությունը, բանկերի հետ համագործակցելով, որոշ հաճախորդների վարկերի գծով երաշխիքների տրամադրումն է՝ երաշխավորելով վարկի մինչև 80%-ը: Բանկի վստահությունն ապահովելու նպատակով այդ ֆոնդերը իրենց երաշխիքային կապիտալը ավանդի տեսքով ներդնում են համագործակցող բանկերում: Ֆոնդերի կապիտալի համալրման աղբյուր են բյուջեի կողմից տրամադրվող միջոցները, հաճախորդներից ստացվող վճարումը, ավանդի դիմաց բանկից ստաց-

վող տոկոսները: Այսպիսով, հաճախորդի անվճարունակության պարագայում բանկը ոչ թե կկրի կորուստներ, այլ վարկային պարտավորությունների պակասող մասը կմարի ֆոնդի երաշխիքի միջոցով՝ համաձայն երաշխավորության պայմանագրի:

РИПСИМЕ АЛЬБЕРТЯН
ОСОБЕННОСТИ УЧЕТА ФИНАНСОВЫХ АКТИВОВ В
КОММЕРЧЕСКИХ БАНКАХ

Ключевые слова: *коммерческий банк, финансовый актив, распределенные средства, рабочий кредит, проблемный кредит, гарантийный фонд.*

Цель данной статьи - выявить основные типы финансовых активов, используемых в коммерческих банках Армении, их экономическое содержание, применяемые методы бухгалтерского учета и анализ этих активов в коммерческом банке в соответствии с теоретическими положениями. Существующие Финансовые активы, различные и разнообразны. Однако результаты проведенного анализа показывают, что в банковской системе наиболее прикладные инструменты являются кредиты. Кредиты предоставляют большую часть прибыли банков, но они также имеют высокий риск потерь. Вот почему важно выявлять и применять средства для эффективного управления кредитами. В частности, предлагается введение гарантийных фондов, что значительно снизит уровень кредитного риска в коммерческих банках Армении.

HRIPSIME ALBERTYAN
FEATURES OF ACCOUNTING FOR FINANCIAL ASSETS IN
COMMERCIAL BANKS

Key words: *commercial bank, financial asset, allocated resources, working loan, problem loan, guarantee fund.*

The purpose of this article is to identify the main types of financial assets used in commercial banks of Armenia, their economic content, accounting methods used and analysis of these assets in a commercial bank in accordance with the theoretical regulations. Existing Financial assets are varied and diverse. However, the results of the analysis show that in the banking system the most applied instruments are credits. Credits provide most of the profits of banks, but they also have a high risk of loss. That is why it is important to identify and apply the means to effectively manage them. In particular, the introduction of guarantee funds is proposed, which will significantly reduce the level of credit risk in commercial banks of Armenia.